Վերջապէս յայտնոեցաւ առաջնորդը, իր հետ բերելով նախորդ օրոայ երկու ղավազներին եւ երկու ձիաներ, որ փաշայի ախոռատան ամենաընտիր նժոյգներից էին, ուղարկել էր մեզ, հեծնելու համար: Վարպետ Փանոսը ճանաչեց առաջնորդին: Դա մի աստիճանաւոր էր, որ փաշայի մօտ քարտուղարի պաշտօն էր կատարում, եւ յայտնի էր, որպէս ուսումնական մարդ: Նա դեռ երիտասարդ էր, ուրախ, զուարթ, եւ, որպէս ակնարկեց մեզ վարպետը, թուրք ծառայողների սովորութեան համեմատ, օղիի կատարեալ սիրահար էր: Գուցէ այդ էր պատճառը, որ նախաճաշիկի ժամանակ վարպետ Փանոսը առանձին ուշադրութիւն էր դարձնում նրա խմելու վրայ եւ աշխատում էր, որքան կարելի էր, գոհացնել նրան: Օրից մի քանի ժամ անցած էր, երբ մենք ճանապարհ ընկանք:

Հասնելով հսկայ քարաժայռի ստորոտը, որի բարձրութեան վրայ նստած էր բերդը, մենք ցած իջանք ձիերից եւ սկսեցինք քարէ մաշուած սանդուղքներով դէպի վեր բարձրանալ: Սարսափելի ճնշող տպաւորութիւն էր գործում այդ բերդը իմ վրայ: Նրա ահաւորութեան առջեւ մարդ կարծես մանրանում էր, փոքրանում էր, եւ կորցնում էր իր բոլոր քաջաթիւնը: Չգիտեմ ի՞նչ էր պատճառը, արդեօք այն, որ իմ առջեւ ներկայանում էր մի պատկառելի հնութիւն, թէ ա՞յն, որ այդ լուռ, խորախորհուրդ քարաժայռը պահել էր իր սրտի մէջ խիստ տխուր յիշատակներ մեր պատմական անցեալից:

Ասլանը չկամեցաւ իսկոյն բերդը մտնել, սկսեց նախ նրա շրջակայքը հետազօտել: Ամէն տեղ երեւում էին հնութեան հետաքրքիր մնացորդներ, ամէն տեղ քարերի ճակատին տեսնում էինք բազմատող բեւեռագրեր: Երբ նրանց մասին հարցրի Ասլանից, նա խիստ անփոյթ կերպով պատասխանեց. «ինձ չեն հետաքրքրում այդ մեռած տառերը»... Ուրեմն ի՞նչ էր հետաքրքրում նրան, ի՞նչ էր որոնում նա այն ամայի քարափների մէջ այնքան խորին ուշադրութեամբ: Նա մի բան որոնում էր, որովհետեւ ես շատ անգամ նկատում էի, իր յիշողութեան գրքոյկը հանում էր ծոցից եւ մի բան գրում էր նրա վրայ:

Մեր առաջնորդը, որին իբրեւ զարգացած մարդ, եւ մանաւանդ իբրեւ հնագէտ, փաշան դրել էր մեզ հետ, որ ցոյց տար հնութիւնները եւ բացատրէր մեզ նրանց նշանակութիւնը, այդ երիտասարդ թուրք գիտնականը անդադար Ասլանի ուշադրութիւնը դարձնումէր այս ու այն առարկայի վրայ եւ իր յոգնեցուցիչ շատախօսութեամբ աւելի խանգարում էր նրան, քան թէ օգնում էր: — «նայեցէք այդ ծակին, — նա ցոյց էր տալիս մի վիրապի բաւական լայն բերանը, — դա իջնում է ցած եւ ցած մինչեւ երկրի խորքերը, յետոյ ստորերկրեայ ոլոր-մոլոր ճանապարհներով հասնում է մինչեւ ծովակի յատակը: